ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնի համար

11.02.2021

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոնները

Հայտատու՝ Չկալովկայի համայնքապետարան

« Համայնքային ծառայության մասին՝ ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկայի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/օպերատոր (ծածկագիր 3.1-1)

- ✓ Իրականացնում է ՏԻՄ-ում և աշխատակազմում մուտաքագրված հարկերի, տուրքերի, վարձավճարների, ծրագրերի ինֆորմացիոն բազայի և մյուս գործառույթների հետ կապված այլ տեղեկությունների համակարգչային զետեղման աշխատանքները,
- ✓ Կատարում է գրությունների, նամակների պատասխանների տպագրում-առաքումը օպերատորական ողջ աշխատանքները,
- ✓ Համակարգիչ է մուտքագրում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցութային ատեստավորման թեստերը և մյուս փաստաթղթերը, համակարգչում զետեղում է համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը, հսկում է դրանց փոփոխությունների հետ կապված գործընթացը և համայնքի ղեկավարի կողմից դրանց փոփոխության դեպքում փոփոխություն է կատարում համապատասխան ֆայլում,
- ✓ Իրականացնում է համայնքային ծառայության հետ կապված աշխատանքները (թափուր տեղերի համար դիմորդների գործերի ընդունում, մրցութային և ատեստավորման հանձնաժողովներին դրանց հանձնելը և այլն),
- ✓ Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ համակարգիչ է մուտքագրում հաշվետվությունները, տեղեկանքները, որոշումները, նախագծերը:Կատարում է իր իրավասության ոլորտին վերաբերվող բոլոր հարցերի ուսումնասիրություն և առաջարկություններ է ներկայացնում իր ղեկավարին,

- ✓ Իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող առաջարկությունների,եզրակացությունների պատասխանների, հաշվետվությունների տպագրման աշխատանքները,
- ✓ Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի ծրագրերի վարումը և աշխատակազմի գործավարությունը,
- ✓ Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ/սոցիալական երաշխիքներ/ և կրում է ակտերով նախատեսված այլ պարտականություններ/սահմանափակումներ/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ➢ Առնվազն միջնակարգ կրթություն.
- ➢ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքների , աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ➢ Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
- ➢ Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ մարտի 3:

Մրցույթը կանցկացվի 2021թ.-ի մարտի 18-ին, ժամը 11:00-ին համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ գ. Չկալովկա, 1-ին փող., շ.10):